ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Արմենպրես» լրատվական գործակալության կայքից «Հեղինակության կառավարումը Հայաստանում. զրույց Շուշան Հարությունյանի՝ «Աքսել Մոնդրիան» ընկերության համահիմնադրի հետ» վերնագրով հոդվածի հեռացման պատճառով Շուշան Հարությունյանի եւ «Արմենպրես» լրատվական գործակալության միջեւ առաջացած վեճը լրագրողական էթիկայի սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից գնահատելու՝ ՏՎԽ դիմումի վերաբերյալ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2025թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին (ԴՄ) է դիմել Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) քարտուղար Շուշան Դոյդոյանը՝ «Արմենպրես» պետական լրատվական գործակալության կայքում եւ ֆեյսբուքյան էջում հրապարակված, այնուհետեւ հեռացված՝ *«Հեղինակության կառավարումը Հայաստանում. զրույց «Աքսել Մոնդրիան» ընկերության համահիմնադիր Շուշան Հարությունյանի հետ»* վերնագրով նյութի՝ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրին համապատասխանելու կապակցությամբ: Դոյդոյանը ՏՎԽ անունից ԴՄ է ուղարկել Շուշան Հարությունյանի դիմումի վերաբերյալ կայացրած ՏՎԽ եզրակացությունը եւ Դիտորդ մարմնին խնդրել է Հարությունյանի դիմումը քննարկման առարկա դարձնել էթիկայի տեսանկյունից:
2. Շուշան Հարությունյանը ՏՎԽ-ին ուղղած իր դիմումով տեղեկացրել է, որ հուլիսի 24-ին հրապարակված նյութը հուլիսի 26-ին առանց պատշաճ պարզաբանման հեռացվել է Ֆեյսբուքի էջից, ապա՝ «Արմենպրեսի» կայքից: Ըստ դիմումատուի՝ հրապարակումը հեռացվել է առանց հիմնավոր պատճառաբանության եւ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ լրագրողների գործունեության ազատության սկզբունքի խախտմամբ: Նշվում է, որ նյութը չի պարունակել վիրավորանք, զրպարտություն, ատելության խոսք կամ այլ հակաիրավական տարր, այլ ընդամենը ներկայացրել է մասնագիտական կարծիք:

3. Տեղեկատվական վեճերի խորհուրդը դիմումի վերաբերյալ սեպտեմբերի 30-ին հրապարակած եզրակացությունում անդրադարձել է վեճի իրավական ասպեկտին՝ եզրափակիչ հատվածում խնդրի էթիկական կողմին անդրադառնալու հարցը պատվիրակելով ԶԼՄ-ների ինքնակարգավորման Դիտորդ մարմնին:
4. ԴՄ-ին ուղղած դիմումի մեջ ՏՎԽ քարտուղար Շուշան Դոյդոյանն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ խնդրո առարկա նյութի հեռացման մասին որոշման հիմնավորումը «Արմենպրեսը» տվել է միայն ՏՎԽ հայցած պարզաբանումների մեջ: Իսկ մինչեւ այդ, նյութը հեռացնելու որոշումը կայացվել է առանց հստակ եւ գրավոր հիմնավորման, առանց այդ որոշման մասին Շուշան Հարությունյանին ու հանրությանը պատշաճ եւ ժամանակին տեղեկացնելու:
5. Ըստ վերոհիշյալ պարզաբանումների՝ «Արմենպրես» գործակալության եւ «Աքսել Մոնդրիան» ընկերության միջեւ կնքված է եղել համագործակցության պայմանագիր, որը գործել է մինչեւ այս վեճի ծագելը, ինչից հետո խզվել է:

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

…խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են

2.1. Հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները:
6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, եւ պատասխանի հնարավորություն ընձեռել բոլոր նրանց, որոնց հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:
6.3. Ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:
7.5. Չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր: Այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից կամ այդ մասին նշում կատարել:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը,

- ✓ ՏՎԽ առաջարկով քննելով Շուշան Հարությունյանի ներկայացրած դիմումի՝ լրագրողական էթիկային վերաբերող հանգամանքները,
- ✓ հաշվի առնելով, որ Կանոնագիրը չի պարունակում կոմերցիոն պայմանագրերի հիման վրա հրապարակված նյութերի

(վճարովի գովազդային նյութերի) էթիկական սկզբունքները սահմանող դրույթներ,

- ✓ այդուհանդերձ, հիմք ընդունելով համընդհանուր էթիկական կանոնները եւ Կանոնագրի այլ կետերի, մասնավորապես՝ 7.5 կետի անուղղակի առնչությունը քննարկվող դեպքին,

արձանագրում է, որ

- ✓ Խնդրո առարկա նյութը հրապարակվել է համաձայն 2023թ. հունիսի 1-ին կնքած պայմանագրի, որում հստակ կերպով արձանագրված չեն եղել հնարավոր վեճերի, մասնավորապես՝ հրապարակված նյութի հեռացման կամ չհեռացման խնդիր ծագելու դեպքում կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Հետագա վեճերից խուսափելու համար ցանկալի է, որ պայմանագրում մանրամասնորեն նկարագրված լինեն հնարավոր տարաձայնությունների լուծման ուղիները:
- ✓ Եթե հրապարակումը պատրաստվել է կոմերցիոն պայմանագրի հիման վրա, ապա անհրաժեշտ է, որ այդ մասին նշում լինի՝ ինչը բխում է Կանոնագրի 2-րդ՝ «Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում» բաժնի սկզբունքից եւ հանրային պատշաճ հաղորդակցության հրամայականից: Այս մոտեցումը վերաբերում է հատկապես այն լրատվամիջոցներին, որոնք ֆինանսավորվում են հանրային (պետական) միջոցներից:
- ✓ Նախապես պատրաստված նյութը ձեւափոխելիս, այն հրապարակելու կամ չհրապարակելու հարցը լուծելիս, ինչպես նաեւ այդ նյութի հեռացման մասին որոշում կայացնելիս խմբագրությունը պետք է սերտորեն համագործակցի եւ համաձայնության գա գործընկերոջ՝ պայմանագրի մյուս կողմի հետ:
- ✓ «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունը, խնդրո առարկա նյութը երկկողմ պայմանագրի հիման վրա հրապարակելուց հետո, հարցազրույց տված անձի հետ նյութի վերաբերյալ տարաձայնությունների պատճառով հեռացրել է այն: Ընդ որում, խմբագրությունը Շուշան Հարությունյանին Ֆեյսբուքի «Մեսենջեր» հավելվածի միջոցով նախօրոք ծանուցել է նյութը հեռացնելու մտադրության մասին, այդուհանդերձ, առանց սպասելու արձագանքի, կարճ ժամանակ անց հեռացրել է: Դիտորդ մարմինը համարում է, որ տվյալ իրավիճակում ցանկալի կլիներ, որ նյութը հեռացնելուց առաջ խմբագրությունն այդ մտադրության մասին տեղեկացնելու ողջամիտ հավելյալ միջոց ձեռնարկեր (օրինակ՝ արձագանքին սպասելու, զանգահարելու կամ այլ ձեւով)՝ հավաստիացած լինելու համար, որ հասցեատերը ծանուցումը ստացել է:
- ✓ Հանրային (պետական) ֆինանսավորում ստացող լրատվամիջոցը պետք է ապահովի իր որոշումների առավելագույն թափանցիկությունը՝ հանրային վստահությունը պահպանելու եւ կամայականության կասկածները բացառելու համար:

Քանի որ «Արմենպրես» լրատվական գործակալությունը չի միացել ԶԼՄ-ների Ինքնակարգավորման նախաձեռնությանը եւ չի ստորագրել

Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, սույն փորձագիտական կարծիքը կրում է խորհրդատվական բնույթ։ Միեւնույն ժամանակ, Դիտորդ մարմինը լրատվամիջոցներին հորդորում է գործընկերների հետ նմանատիպ անախորժություններից խուսափելու նպատակով հարցազրույցների մասնակիցների հետ հարաբերություններին, ինչպես նաեւ պայմանագրային հիմունքներով հրապարակվող նյութերի բովանդակության համաձայնեցման եւ դրանց փոփոխման/հեռացման կարգին վերաբերող խմբագրական հստակ քաղաքականություն մշակել եւ հրապարակել։

Ելնելով վերը նշվածից՝ «Արմենպրեսը» պարտավոր չէ հրապարակել սույն փորձագիտական կարծիքը, սակայն Դիտորդ մարմինը կողջունի գործակալության կողմից նման նախաձեռնությունը։

Ընդունվել է 2025թ. դեկտեմբերի 16-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՄԱ մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբան
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Ampop.am-ի հիմնադիր խմբագիր
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
«Ցայգ» հեռուստաընկերության տնօրեն
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
«Ալիք Մեդիա» լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Factor TV-ի գործադիր տնօրեն
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 98-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների

էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: